ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՊՈԵՄԸ

Հովհաննես Թումանյանը «Սասունցի Դավիթը» պոեմը գրել է 1902 թվականին՝ «Սասնա ծռեր» էպոսից օգտվելով:

Պոեմում բանաստեղծը վերարտադրել է հայկական էպոսի հերոսական ոգին, հաստատել ազգի ու հայրենիքի հարատևման համար բռնության դեմ մղվող անձնուրաց պայքարի անհրաժեշտությունը, առաջ քաշել մարդու արդար գործի և բարձր բարոյականության գաղափարը:

Այսուհանդերձ, Հովհ. Թումանյանը «Սասնա ծռերում» տեղ գտած մի շարք մանրամասներ չի ընդգրկել իր ստեղծագործության հյուսվածքում: Դրանցից են, օրինակ, Մհսրում եղած ժամանակ մանուկ Դավթի հետ կատարված մի քանի դեպքերը, Կաթնաղբյուրից ջուր խմելու, երկաթե սյունը թրով կտրելու դրվագները և այլն: Ըստ էության բանաստեղծն այդպես է վարվել՝ ելնելով իր գեղագիտական ու գաղափարական ըմբռնումներից:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

(հատված)

Տեսավ՝ Դավթի նժույգն անտեր
Սարերն ընկած խրխնջալով,
Ներքև Մհսրա զորքը չոքած,
Ինչպես անծեր ծրփուն մի ծով:
Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չրպատռի իրեն զոռից,
Կանգնեց Օհան, ամպի նման
Գոռաց Սասմա սարի ծերից:
Հեյ-հեյ, Դավի՛թ, որտե՞ղ ես դու.
Հիշի՛ր խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Ու դո՛ւրս արի լույսն արևի...
Ձենը գընաց դրմբդրմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
Հայ-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում:
Ո՞վ Մարութա Աստվածածին,

Ո՞վ անմահ խաչ պատարագի,
Ձեզ եմ կանչել,՝ հասեք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,
Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կըտոր,
Կրտողները երկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր:
Ելավ նորից, կանգնեց ահեղ,
Սարսափ կալավ դև Մելիքին:
Դավիթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,
Սեղան նըստե՛նք, խոսե՛նք կարգին...
– Էլ չեմ նստի ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շուտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դուրս եկ մեյդան, կըռիվ անենք:
՝ Կըռիվ անենք,– ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:
՝ Քոնն է, զարկի ը,– կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի միջին:
Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից եկավ կըրկին:
Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայուսկան իր մըկունդը.
Եկավ, զարկեց, կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը...
Մեռավ Դավիթ էս մի զարկից,
– Ասավ Մելիք իրեն զորքին:
Կենդանի ե՛մ,– ամպի տակից
Գոռաց Դավիթ,– Մըսրա-Մելքին:
Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից:
Եկավ, զարկեց, զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:
Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,–
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:
Կենդանի՛ եմ,– կանչեց Դավիթ,–

Մին էլ արի՛ – հերթն ինձ հասավ:
– Հայ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,–
Կանչեց Մելիք ու վեր կացավ:
Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու էնտեղից գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավթի վըրա;
Եկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին ելավ Սասմա դաշտից,
Որոնեց երեսն արեգական...
Երբ որ անցավ երեք օրը,
Էն ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեգ-մըշուշում:
Մելի՛ք,– ասավ,– իմն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը,
Ու տապ արավ գոռոզ հոգին:
Դընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:
Մըռընչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կեծակին:
Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառավ մայրը ջադու.
– Դավիթ, մազըս ա՛ռ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ինձ բաշխիր դու:
Երկրորդ անգամ թուրը քաշեց,
Էս անգամ էլ եկավ քուրը.
–Դավի՛թ, եթե կուզես,– կանչեց,–
Իմ սըրտին զարկ երկրորդ թուրը...
Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
Էս մի զարկն ու աստված,– ասավ,–
Էլ մարդ չըգա, պետք է որ տամ:
Ասավ, ելավ ու փոթորկեց,

Թրռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կեծակին:
Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշիե,
Օխտը գազ էլ դենը գընաց:
Կենդանի՞ եմ, մին էլ արի՞,-
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...
- Մելի՞ք,- ասավ,- թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:
Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կըտրրվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց. - Մի՛ վախենաք,
Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:
Դուք ըռանչպար մարդիկ,- ասավ,-
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:
Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...
Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...
Դարձե՛ք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,
Հորում լինեք քառսուն գազ խոր,
Թե ջաղացի քարի տակին,-
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասնա Դավիթ, Թուր-Կեծակին:
Էն ժամանակ աստված գիտի՝

Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, որ մեզ արիք դուշման...

ԲԱՌԱՐԱՆ

Անծեր – անծայր:
Գրգուռ սար – լեռնագագաթ Հայկական Տավրոսում:
Դուշման – թշնամի:
Զոռ – ուժ, զորություն:
ժանտ – դաժան, անգութ, անողորմ:
Լիդր – մոտ 6 կգ ծանրաչափ, ուրեմն, 3000 լիդրը հավասար է 18 000 կգ.:
Հալա – հիմա, այժմ, դեռ:
Հալաբ – Հալեպ՝ քաղաք հին Ասորիքում, այժմ Սիրիայի խոշոր քաղաքներից է:
Մեյդան – հրապարակ, ասպարեզ :
Մկունդ – տեգ, նիզակ (խոցող զենք):
Զադու – կախարդ, վհուկ, չար:
Զաղաց ՝ ջրաղաց:
Զուր կտրել (լեղին ջուր կտրել) – սաստիկ վախենալ, զարհուրել:
Ռանչպար – հողագործ:
Փոշման լինել – զղջալ, ափսոսել:
Օխտը – յոթը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Մեկնաբանիր պոեմի գաղափարը, բացատրիր՝ դա ինչո՞վ է համահունչ էպոսի գաղափարախոսությանը:
2. Մարտն սկսելուց առաջ Դավիթն ինչպե՞ս է վարվում Մըսրա զորքի հետ:
3. Ի՞նչ արդյունք է ունենում, երբ արաբ ծերունին Դավթին է ուղղում իր խոսքը: Գնահատիր այդ խոսքի բովանդակությունը:
4. Ինչպիսի՞ երանգավորում ունի Մելիքին արթնացնելու հատվածը: Մեկնաբանիր երևույթը:
5. Ի՞նչ միջոցներով է Մըսրա Մելիքը ջանում հաղթել Դավթին: Բնութագրիր Մելիքի արարքը:
6. Բացատրիր Զենով Հովանի երգի խորհրդանշական իմաստը: Էլ որ ստեղծագործություններում ենք հանդիպել խորհրդապաշտական նշանակությանը
7. Նկարագրիր Դավթի և Մելիքի կռիվը:
8. Մենամարտի կարգը որոշելիս ինչպե՞ս են իրենց դրսևորում Դավիթն

ու Մելիքը: Վենի գծակարգով ցո՛ւյց տուր նմանություններն ու տարբերությունները:

9. Ի՞նչ համեմատություններով է պատկերված Մելիքի հարվածների ուժգնությունը: Պատկերավորման ի՞նչ միջոցներն են գործածված
10. Ի՞նչ վեհանձն արարք է դրսևորում Դավիթը Մելիքի դեմ կռվելիս:
11. Մելիքին սպանելուց հետո ինչպե՞ս է վարվում Դավիթը Մըսրա զորքի հետ: Ի՞նչ խորհուրդ է տալիս Դավիթը արաբ զինվորներին:
12. Բնութագրի՛ր Դավթին՝ օգտագործելով բնագրային բառամթերքը:
13. Բնագրից դո՛ւրս գրիր բարբառային ձևեր և գտի՛ր դրանց գրական համարժեքները:
14. Դյուցազնավեպի հիմնական գաղափարն արտահայտված է երրորդ ճյուղում, որ կոչվում է «Սասունցի Դավիթ»: Դավիթը ժողովրդի ամենասիրելի հերոսն է: Նրա կերպարի մեջ ժողովուրդը մարմնավորել է գեղեցիկի, վեհության, բարու և արդարության մասին իր ունեցած նվիրական ձգտումները: Դավիթն ազատասեր, ազնիվ, քաջ և անվախ հսկա է: Նա թշնամիների դեմ մղած կռիվներում երբեք հանդես չի բերում փոքրոգություն, երբեք չի դիմում նենգության կամ բռնության: Մսրա Մելիքի զորքերի վրա հարձակվելուց առաջ Դավիթը բարձրաձայն կոչ է անում նրանց նախապատրաստվել կռվի, բայց Մելիքը նենգ է ու չարակամ:
15. Նա փորձում է Դավթին հաղթել խաբեությամբ: Հաղթելով Մելիքին՝ Դավիթը հրաժարվում է թագավորել մսրցիներին: Դավիթը աչքի է ընկնում նաև իր պարզամտությամբ, իր ժողովրդի ու հայրենի բնաշխարհի նկատմամբ տածած անսահման սիրով: